ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 023724855 metsamormeria@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 1530

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկվարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2.2 մասով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 2-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի մրցույթային հանձնաժողովի ձևավորման նպատակով, հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Թադևոսյանին, որը պարտավորվում է

մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2022թ.սեպտեմբերի 2
ք.Մեծամոր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի
սեպտեմբերի 2-ի N 1530 որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթային հանձնաժողովի

Հ/Հ	Անուն,ազգանուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Հերմինե Սեյրանի Վարդանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
2	Նաիրա Խորենի Սարգսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
3	Մարտիրոսյան Ռուստամ Կարապետի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ	Մեծամորի համայնքապետարան
4	Մարատ Միհրանի Հովհաննիսյան	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	Մեծամորի համայնքապետարան
5	Արտյոմ Մշիրի Սնջոյան	Մեծամոր համայնքի ավագանու անդամ	Մեծամոր համայնքի ավագանի
6	Արմինե Հենրիկի Մարգարյան	«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան ՀՈԱԿ -ի տնօրեն	«Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ

Աշխատակազմի քարտուղար՝ Մարատ Հովհաննիսյան